ԿԱՐԾԻՔ

Գևորգ Պարգևի Նազարյանի «Միացյալ Հայաստանի հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայկական հարցը լուծելու և Միացյալ Հայաստանի գաղափարի կենսագործման հարցերը մշտապես եղել են հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում: Անցած տասնամյակների ընթացքում տվյալ թեմային առնչվող բազմաթիվ աշխատանքներ են հրատարակվել ինչպես Սփյուռքում, այնպես էլ Հայաստանում:

Գ. Նազարյանի՝ «Միացյալ Հայաստանի հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» ատենախոսությունը գալիս է լրացնելու այդ թեմայի շրջանակներում կատարված հետազոտությունների շարքը: Աշխատանքի առավելությունների թվում կարելի է նշել այն, որ հեղինակի կողմից օգտագործվել են թեմային առնչվող ամերիկյան ու բրիտանական արխիվային վավերագրերը և փորձ է կատարվել դրանցից քաղված տեղեկությունները համադրել հայկական արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հետ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, ժամանակագրական շրջանակները, հետազոտության նպատակներն ու խնդիրները, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Երկու ենթագլխից բաղկացած առաջին գլխում պատմական ակնարկով ներկայացվում է Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործման ուղղությամբ նախ Ազգային պատվիրակության գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, իսկ հետագայում արդեն հայկական զույգ պատվիրակությունների գործունեությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում:

Մեկ ենթագլխից բաղկացած երկրորդ գլուխը նվիրված է Առաջին աշխարհամարտի տարիներին և Մուդրոսի զինադադարի կնքումից հետո Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության մեջ հայկական միացյալ պետության

գաղափարի իրագործման շուրջ բրիտանական նախագծի շուրջ ծավալված քննարկումներին:

Երեք ենթագլխից բաղկացած երրորդ գլուխը նվիրված է հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացումներին (19-րդ դ. երկրորդ կես – 20-րդ դ.), Միացյալ Հայաստանի վերաբերյալ Փարիզի խաղաղության վեհաժողով ներկայացրած ամերիկյան պատվիրակության նախագծերին, Քինգ-Քրեյնի և Հարբորդի հանձնաժողովների առաջարկներին:

Երկու ենթագլխից բաղկացած չորրորդ գլուխը նվիրված է թուրքական կողմի ջանքերով Միացյալ Հայաստանի գաղափարի կենսագործման ճանապարհին հարուցված խոչընդոտներին:

Եզրակացություններում ամփոփված են աշխատանքի արդյունքները և հիմնական եզրահանգումները:

Հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը զերծ չէ սխալներից, թերություններից ու բացթողումներից, որոնց վրա ենք հրավիրում ատենախոսի ուշադրությունը.

1. Ատենախոսության մեջ նկատվում են կառուցվածքային սխալներ: Իմաստ չուներ երկրորդ գլխում առանձնացնել ենթագլուխ, որը միակն է գլխում, ընդ որում՝ ենթավերնագրի վերնագիրը բովանդակային առումով ավելի տարողունակ է, քան գլխի վերնագիրը: Գլուխը վերաբերում է բրիտանական նախագծի նեղ խնդրին, մինչդեռ ենթագլուխը՝ Առաջին աշխարհամարտի տարիներին և Մուդրոսի զինադադարից հետո Հայաստանի նկատմամբ Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությանն ընդհանրապես: Իրականում պետք է լիներ հակառակը: Հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացումները ենթագլուխը ոչ ժամանակագրորեն, ոչ էլ բովանդակային առումով չի համապատասխանում ատենախոսության թեմային: Գլխում արծարծվող հարցերը վերաբերում են19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, ինչը թեմայի ժամանակագրական սահմաններից դուրս է, իսկ բովանդակային առումով էլ հայկական պետականության բացակայության պայմաններում տվյալ ժամանակահատվածում տեղին չէ խոսել հայ-ամերիկյան հարաբերությունների մասին և պատահական չէ, որ այս վերնագրի տակ ատեխանոսը գերազանցապես ներկայացնում է Օսմանյան կայսրությունում և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում հայ բնակչության շրջանում ամերիկյան միսոներական կազմակերպությունների ծավալած գործունեությունը և ԱՄՆ-ի քաղաքականությունը տվյալ տարածաշրջանում:

2. Աշխատանքում նկատվում են պատմական դեպքերի և իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության խախտումներ: Ազգային պատվիրակության գործունեությունը ներկայացնող ենթագլխում 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» դեկրետից անմիջապես թռիչք է կատարում Մուդրոսի զինադադարին, ինչից կարող է թյուր պատկերացում ստեղծվել, թե պատերազմի վերջին տարում՝ 1918 թ. Ազգային պատվիրակությունը գործունեություն չի իրականացրել: Նույնը նկատվում է Մուդրոսի զինադադարի և այլ փաստերի հետ կապված (էջ 24, 36)

3. Առաջին գլխում, ըստ էության, «Միացյալ Հայաստան» գաղափարի բովանդակությունը և ներքին ազգային տարաձայնությունների բուն պատճառները ու հետևանքները բացահայտված չեն: Կարծում ենք, որ այս թերությունից կարելի կլիներ խուսափել, եթե ատենախոսն օգտվեր տվյալ հարցերին նվիրված Ս. Պողոսյանի թեկնածուական ատենախոսությունը կամ հրատարակված գիրքը՝ Պողոսեան Ս., Պողոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Եր., 2004:

4. Մուդրոսի զինադարին նվիրված նյութը չափից շատ է ներկայացված: Ճիշտ կլիներ առավել սեղմ ներկայացնել զինադադարի հատվածը՝ շեշտադրելով Արևմտյան Հայաստանը թուրքական զորքերից չաղատելու իրողությունը, միայն «անկարգությունների» դեպքում հայկական վիլայեթները դաշնակից զորքերի կողմից ռազմակալելու դրույթի վտանգավորությունը:

5. Եզրակացության բաժինը թույլ է ներկայացված: Ակնկալվում էր քննադատական գնահատականներ բրիտանական քաղաքականությանը Առաջին աշխարհամարտի տարիներին և Մուդրոսի զինադադարից հետո, մանավանդ, որ դա ենթահարց չէ, այլ մի գլուխ: Աշխատանքը միանշանակ կշահեր և գիտական նորույթն էլ ավելի հիմնավորված կլիներ, եթե ատենախոսը ոչ թե առանձին-առանձին ներկայացներ Միացյալ Հայաստանի հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը, այլ կատարեր դրանց համեմատական վերլուծությունը և դրա արդյունքները զետեղեր եզրակացություններում:

6. Աշխատանքի տեքստում և գիտական ապարատում նկատվում են տեխնիկական վրիպակներ: Գրականության տեսության մեջ հեղինակի կողմից ներկայացված գրականությունը ո՛չ ըստ ժամանակաշրջանի, ո՛չ ըստ ազգային պատկանելության, ո՛չ ըստ այբբենական հաջորդականության դասակարգման չի ենթարկվել: Ընդ որում՝ տեքստում դրանց թվարկման և տողատակերում թվարկման հաջորդականությունները միմյանցից տարբերվում են: 1915 թ. մայիսի 24-ի

հայտարարության վերաբերյալ հղում եք կատարել՝ նշելով երկու պատմագիտական աշխատություններ (Մ. Մարուքյան, Վ. Վարդանյան), մինչդեռ ճիշտ կլիներ հղում կատարել բուն փաստաթղթին կամ փաստաթղթերի այն ժողովածուներից որևէ մեկին, որտեղ այն զետեղված է: Չորրորդ գլխի վերնագիրը խմբագրման կարիք է զգում «Միացյալ Հայաստանի ձախողման պատճառները» ձևակերպման փոխարեն պետք է լիներ «Միացյալ Հայաստանի գաղափարի չիրագործման պատճառները»: Ճիշտ կլիներ, եթե հատուկ անունները միօրինակության բերվեին:

Որոշեցին՝ Արված դիտողություններով հանդերձ Գևորգ Պարգևի Նազարյանի «Միացյալ Հայաստանի հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունն ընդհանուր առմամբ բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Կարծիքը հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժինի 2021 թ. ապրիլի 16-ի նիստում (թիվ 3 արձանագրություն):

ՀՀ ԳԱԱ ՊԻ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության
պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Յ. Մարուքյան**

ՀՀ ԳԱԱ ՊԻ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Յ. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ **Հ. Ղ. Մուրադյան**

19.04.2021 թ.